

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱԿՈՐՅԱՆԸ ԵՎ ԱՄԻՐԻԿԱՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգադ թիվ 14156/07)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

17 հոկտեմբերի 2019թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով  
սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

**Հակոբյանը եւ Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ Նախագահ,

Քրշիշթոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Թիմ Այքը [Tim Eicke],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski]՝ դատավորներ,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ Բաժանմունքի քարտուղար,

2019 թվականի սեպտեմբերի 17-ին անցկացնելով դռնփակ  
խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ պրն Վերսանդիկ Հակոբյանի եւ տկն Հեղինե Ամիրխանյանի (դիմումատուներ) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2007 թվականի մարտի 27-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 14156/07) հիման վրա:

2. Դիմումատուներին ներկայացրել են Երեւանում գործող փաստաբաններ պրն Ա. Զոհրաբյանը, տկն Մ. Ղուլյանը եւ պրն Կ. Մեժլումյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետեւ՝ պրն Ե. Կիրակոսյանը:

3. 2009 թվականի մարտի 3-ին Դատարանը որոշում է կայացրել Կառավարություն ուղարկել գանգատի մի մասը՝ կապված դիմումատուների՝ իրենց գույքից զրկելու եւ դրան հաջորդող քաղաքացիական վարույթի ենթադրյալ անարդարացիության վերաբերյալ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ բողոքների հետ: Գանգատը մնացած մասով ճանաչվել է անընդունելի:

4. Հայաստանի կողմից ընտրված դատավոր պրն Արմեն Հարությունյանն ի վիճակի չի եղել մասնակցելու գործի քննությանը (Դատարանի կանոնակարգի 28-րդ կանոն): Հետեւաբար Պալատի նախագահը որոշել է Պաուլին Կոսկելոյին նշանակել որպես *ad hoc* (ժամանակավոր) դատավոր (29-րդ կանոնի 2(բ) կետ):

## ՓԱՍՏԵՐԸ

### 1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուներ Հակոբյանը եւ Ամիրխանյանը (այսուհետ՝ առաջին եւ երկրորդ դիմումատուներ)՝ ծնված համապատասխանաբար 1950 եւ 1958 թվականներին, ապրում են Երեւան քաղաքում եւ ամուսիններ են: Նրանց համատեղ սեփականության իրավունքով պատկանել է Երեւան քաղաքի կենտրոնում գտնվող 222 քմ մակերեսով հողամաս եւ 124,52 քմ մակերեսով տուն: Դիմումատուներն այդ գույքը գնել են 2001 թվականի հոկտեմբերի 23-ին՝ 84 466 500 ՀՀ դրամով (AMD) (մոտավորապես 167 250 եվրո (EUR) տվյալ

ժամանակահատվածում): Այդ գույքի մասով 2001 թվականի նոյեմբերի 7-ին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականի մեջ առաջին դիմումատուն նշված է եղել որպես միակ սեփականատեր:

6. 2000 թվականի նոյեմբերի 25-ին Կառավարությունն ընդունել է թիվ 774 որոշումը, որով հաստատել է Երեւանի քաղաքապետարանի կողմից ներկայացված նախագիծը՝ Երեւանի կենտրոնում կառուցելու պողոտա՝ Հյուսիսային պողոտան, որը կկապեր երկու հիմնական հրապարակները՝ Ազատության հրապարակը եւ Հանրապետության հրապարակը: Պարզվում է, որ Հյուսիսային պողոտան կառուցելու միտքն առաջացել է 1920-ականներին, երբ ծնունդ է առել Երեւան քաղաքի սկզբնական նախագիծը:

7. 2001 թվականի հուլիսի 16-ին Կառավարությունն ընդունել է թիվ 645 որոշումը, որով հաստատել է Հյուսիսային պողոտայի գծի վրա գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտին՝ 82 700 քմ ընդհանուր մակերեսով:

8. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով փոփոխություններ է կատարել 2001 թվականի հուլիսի 16-ի թիվ 645 որոշման մեջ եւ հաստատել է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում գտնվող՝ պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի օտարման գոտին՝ 345 000 քմ ընդհանուր մակերեսով:

9. Ծրագրի իրականացման գործընթացը կառավարելու նպատակով ստեղծվել է հատուկ մարմին՝ Երեւանի կառուցապատման եւ ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակը (Գրասենյակ):

10. Չհստակեցված ամսաթվին Գրասենյակը գնահատման լիցենզավորված կազմակերպությունից՝ «A.E.» ՍՊԸ-ից, պահանջել է կատարել համապատասխան գույքի գնահատում:

11. 2005 թվականի սեպտեմբերի 16-ին «A.E.» ՍՊԸ-ն պատրաստել է նախնական գնահատման հաշվետվություն՝ առանց շինություններ մուտք

գործելու: 2005 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ գույքի շուկայական արժեքը գնահատվել է 48 846 000 ՀՀ դրամ: «A.E.» ՍՊԸ-ի կառավարչի ուղեկցող գրության համաձայն՝ այդ հաշվետվությունը կարող էր հիմք հանդիսանալ նախնական առաջարկի, սակայն ոչ վերջնական համաձայնագրի եւ փոխհատուցման համար:

12. 2005 թվականի սեպտեմբերի 27-ին Գրասենյակն առաջին դիմումատուին տեղեկացրել է, որ համապատասխան գույքը գտնվում է օտարման գոտում եւ ենթակա է վերցման՝ պետական կարիքների համար: Առաջին դիմումատուին առաջարկվել է փոխհատուցման առավելագույն չափը՝ գումարած ֆինանսական խրախուսում՝ 14 653 800 ՀՀ դրամ գումարի չափով, եթե վերջինս համաձայնի ստորագրել համաձայնագիր առաջարկն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, ստորագրի այդ համաձայնագիրը մեկ ամսվա ընթացքում եւ գույքը հանձնի այդ համաձայնագրով նախատեսված ժամկետում:

13. 2005 թվականի հոկտեմբերի 10-ին Գրասենյակն առաջին դիմումատուի դեմ հայց է ներկայացրել՝ նպատակ ունենալով պարտավորեցնել նրան ստորագրել համաձայնագիր՝ 48 846 000 ՀՀ դրամ գումարի չափով փոխհատուցման դիմաց գույքը պետության կարիքների համար վերցնելու մասին:

14. 2005 թվականի հոկտեմբերի 28-ին «A.E.» ՍՊԸ-ն գույքի իրական շուկայական արժեքը որոշելու համար դատարանի որոշման հիման վրա կատարել է լրացուցիչ գնահատում՝ այնտեղ մուտք գործելով:

15. 2005 թվականի նոյեմբերի 10-ին «A.E.» ՍՊԸ-ն պատրաստել է գնահատման հաշվետվություն, համաձայն որի՝ գույքի շուկայական արժեքը 2005 թվականի հոկտեմբերի 28-ի դրությամբ եղել է 54 838 000 ՀՀ դրամ:

16. 2005 թվականի նոյեմբերի 16-ին Գրասենյակը նոր առաջարկ է արել առաջին դիմումատուին՝ առաջարկելով նրան վերը նշված գումարը՝ գումարած 16 451 400 ՀՀ դրամի չափով ֆինանսական խրախուսում: Պարզվում է, որ առաջին դիմումատուն չի ընդունել այդ առաջարկը:

17. 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է Գրասենյակի հայցը՝ պահանջելով առաջին դիմումատուից 54 838 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով փոխհատուցման դիմաց ստորագրել համաձայնագիր, եւ նրա ընտանիքի անդամների հետ միասին վտարել նրան:

18. 2005 թվականի դեկտեմբերի 21-ին առաջին դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել:

19. 2006 թվականի փետրվարի 2-ին առաջին դիմումատուի փաստաբանը գրությամբ դիմել է Անշարժ գույքի կադաստր՝ հարցում կատարելով 2001 թվականի վերջին եռամսյակից մինչեւ 2005 թվականի վերջին եռամսյակն ընկած ժամանակահատվածում անշարժ գույքի գների աճի մասին:

20. 2006 թվականի փետրվարի 7-ի գրությամբ Անշարժ գույքի կադաստրն առաջին դիմումատուի փաստաբանին տեղեկացրել է, որ տվյալ ժամանակահատվածում բնակելի շենքերի մեկ քառակուսի մետրի համար անշարժ գույքի միջին գները 134 000 ՀՀ դրամից ավելացել են մինչեւ 325 400 ՀՀ դրամ, իսկ մինչեւ 400 քմ մակերեսով հարակից տարածք ունեցող՝ մինչեւ 250 քմ մակերեսով տների մեկ քառակուսի մետրի համար՝ 141 200 ՀՀ դրամից մինչեւ 340 700 ՀՀ դրամ:

21. 2006 թվականի մարտի 23-ին սեփականության իրավունքի գրանցման վկայականի մեջ կատարվել է ուղղում, եւ երկրորդ դիմումատուն ավելացվել է որպես համասեփականատեր:

22. 2006 թվականի ապրիլի 18-ին Սահմանադրական դատարանը, *inter alia* (ի թիվս այլնի), Կառավարության 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումը հակասահմանադրական է ճանաչել:

23. 2006 թվականի հունիսի 21-ին առաջին դիմումատուի փաստաբանները գրավոր հայտարարություններ են ներկայացրել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ պնդելով, *inter alia*, որ համապատասխան գույքի՝

«A.E.» ՍՊԸ-ի գնահատման հաշվետվությունների մեջ նշված շուկայական արժեքը խիստ թերագնահատված է եղել՝ հաշվի առնելով նախորդ հինգ տարիների ընթացքում անշարժ գույքի գների աճը, ինչի մասին վկայում է Անշարժ գույքի կադաստրի կողմից տրամադրված տեղեկատվությունը: Նրանք հայտնել են նաև, որ երկրորդ դիմումատուն վարույթում չի ներգրավվել որպես պատասխանող՝ չնայած այն փաստին, որ նա համապատասխան գույքի համասեփականատեր է եղել, եւ այն փաստին, որ Վարչական շրջանի դատարանի վճիռն առնչվել է նրա սեփականության իրավունքին:

24. 2006 թվականի հունիսի 27-ին Գրասենյակի պահանջով «A.E.» ՍՊԸ-ն կատարել է դիմումատուների գույքի լրացուցիչ գնահատում:

25. Պարզվում է, որ Վերաքննիչ դատարանում վարույթի ընթացքում՝ որոշակի պահի, երկրորդ դիմումատուն ներգրավվել է որպես կողմ՝ ստանալով նիստերից մեկին ներկայանալու ծանուցագիր: Այնուհետեւ պարզվում է, որ 2006 թվականի հուլիսի 3-ին նա Վերաքննիչ դատարան հարցում է ներկայացրել վարույթում իր կարգավիճակի վերաբերյալ:

26. 2006 թվականի հուլիսի 4-ին «A.E.» ՍՊԸ-ն պատրաստել է գնահատման նոր հաշվետվություն, համաձայն որի՝ գույքի շուկայական արժեքը 2006 թվականի հունիսի 27-ի դրությամբ եղել է 60 292 000 ՀՀ դրամ (մոտավորապես 114 650 եվրո տվյալ ժամանակահատվածում):

27. 2006 թվականի հուլիսի 6-ին Գրասենյակը նոր առաջարկ է արել երկու դիմումատուներին՝ առաջարկելով նրանց վերը նշված գումարը՝ գումարած 18 087 600 ՀՀ դրամի չափով ֆինանսական խրախուսում:

28. Նույն օրը գնահատման նոր հաշվետվությունը ներկայացվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան:

29. 2006 թվականի հուլիսի 7-ին ընդունված օրենքով մի շարք փոփոխություններ են նախատեսվել Քաղաքացիական դատավարության օրենսգրքում (ՔԴՕ):

30. 2006 թվականի հուլիսի 7-ի գրությամբ ավագանին Վերաքննիչ դատարանին տեղեկացրել է, որ առաջին դիմումատուն ծանուցվել է 2006 թվականի հուլիսի 10-ի նիստին ներկայանալու մասին, սակայն երկրորդ դիմումատուն չի ծանուցվել, ինչի պատճառով չի ներկայացել:

31. 2006 թվականի հուլիսի 10-ին առաջին դիմումատուի փաստաբանները դիմում են ներկայացրել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ խնդրելով դատարանին փորձագիտական եզրակացություն պահանջել՝ որոշելու համար, *inter alia*, համապատասխան գույքի իրական շուկայական արժեքը՝ հաշվի առնելով 2001 թվականից մինչև 2006 թվականն ընկած ժամանակահատվածում գների աճը: Պարզվում է, որ այդ դիմումը մերժվել է:

32. 2006 թվականի հուլիսի 14-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բավարարել է Գրասենյակի վերաքննիչ բողոքը՝ պահանջելով դիմումատուներից 60 292 000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով փոխհատուցման դիմաց ստորագրել համաձայնագիր, եւ նրանց ընտանիքի անդամների հետ միասին վտարել նրանց: Այդ նիստին ներկա է եղել միայն առաջին դիմումատուն: Վճռի մեջ նշվել է, որ երկրորդ դիմումատուն պատշաճորեն ծանուցվել է նիստի ժամի եւ տեղի վերաբերյալ, սակայն չի ներկայացել: Վճիռը պետք է ուժի մեջ մտներ 15 օր հետո եւ կարող էր վիճարկվել Վճռաբեկ դատարանում:

33. 2006 թվականի հուլիսի 28-ին դիմումատուները երկու առանձին բողոքներ են ներկայացրել Վճռաբեկ դատարան: Երկրորդ դիմումատուն, *inter alia*, բողոքել է, որ ինքը Վարչական շրջանի դատարանում վարույթում ներգրավված չի եղել: Նա նաեւ պնդել է, որ Վերաքննիչ դատարանը չի պատասխանել 2006 թվականի հուլիսի 3-ի իր հարցմանը եւ չի ծանուցել իրեն 2006 թվականի հուլիսի 14-ի նիստի մասին:

34. 2006 թվականի օգոստոսի 5-ին 2006 թվականի հուլիսի 7-ի ՔԴՕ փոփոխություններն ուժի մեջ են մտել:



35. 2006 թվականի օգոստոսի 11-ին Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը որոշել է չընդունել դիմումատուների բողոքներն այն հիմքով, որ դրանք չեն համապատասխանում ՔԴՕ 230-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի եւ 3-րդ մասի պահանջներին: Մասնավորապես, բողոքների մեջ նշված չեն եղել 231.2 հոդվածի 1-ին մասով պահանջվող հիմքերից որեւէ մեկը: Ավելին, չի եղել ապացույց, որ բողոքների պատճեններն ուղարկվել են մյուս կողմերին եւ գործը քննած ստորադաս դատարան: Վճռաբեկ դատարանը սահմանել է դիմումատուների կողմից իր որոշումներն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետ՝ նրանց կողմից իրենց բողոքներում առկա թերությունները վերացնելու համար:

36. 2006 թվականի սեպտեմբերի 11-ին առաջին դիմումատուն նոր վճռաբեկ բողոք է ներկայացրել: Մասնավորապես, նա պնդել է, որ նյութական եւ դատավարական իրավունքի խախտումները ծանր հետեւանքներ կառաջացնեն, այն է՝ ինքն անօրինական կերպով կզրկվի իր գույքից: Ավելին, Վճռաբեկ դատարանի կողմից ընդունվելիք դատական ակտն էական նշանակություն կունենա օրենքի միատեսակ կիրառության համար՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի որոշումը: Ի վերջո, վիճարկվող վճիռը հակասում է Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում ընդունված մեկ այլ որոշման: Նա նաեւ պնդել է, որ իր առաջին վճռաբեկ բողոքը պետք է ընդունվեր առանց 231.2 հոդվածի 1-ին մասի պահանջները կիրառելու, քանի որ բողոքը ներկայացնելիս այն դեռեւս ուժի մեջ մտած չի եղել:

37. 2006 թվականի սեպտեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանը վեց դատավորի կազմով կոլեգիայի դռնփակ նիստում որոշել է բողոքն անընդունելի ճանաչել: Ներկայացվել են հետեւյալ պատճառները.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում բերված՝ [ՔԴՕ-ի] 231.2 հոդվածի 1-ին մասով [պահանջվող] փաստարկները բավարար չեն բողոքն ընդունելու համար»:

38. 2006 թվականի հոկտեմբերի 30-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը կատարողական թերթ է տրամադրել 2006 թվականի հուլիսի 14-ի իր վճռի առնչությամբ:

39. 2006 թվականի նոյեմբերի 22-ին երկրորդ դիմումատուն նոր վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը նույնպես պարունակում էր առաջին դիմումատուի կողմից բերված փաստարկների նման փաստարկներ: Նա նաեւ նմանատիպ փաստարկ էր բերել՝ կապված իր նախորդ բողոքի հետ:

40. Կառավարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2006 թվականի դեկտեմբերի 1-ին դիմումատուների գույքը հանձնվել է Գրասենյակին:

41. 2006 թվականի դեկտեմբերի 15-ին Վճռաբեկ դատարանը յոթ դատավորի կազմով կոլեգիայի դռնփակ նիստում որոշել է բողոքն անընդունելի ճանաչել: Ներկայացվել են հետեւյալ պատճառները.

«Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում բերված՝ [ԲԴՕ-ի] 231.2 հոդվածի 1-ին մասով [պահանջվող] ընդունելիության հիմքերը բացակայում են: Մասնավորապես, այս գործով Վճռաբեկ դատարանի կողմից ընդունվելիք դատական ակտը չի կարող էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Ավելին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում բերված՝ հավանական դատական սխալի եւ դրա հետեւանքների վերաբերյալ փաստարկները տվյալ գործի հանգամանքներում անհիմն են»:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**Ա. 1995 թվականի Սահմանադրություն (ուժի մեջ է 2005 թվականի դեկտեմբերի 6-ից՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված փոփոխություններից հետո)**

42. Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: ...

Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ: ...»:

**Բ. ՀՀ սահմանադրական դատարանի 1998 թ. փետրվարի 27-ի որոշումը՝ Ազգային ժողովի կողմից 1995 թ. դեկտեմբերի 27-ին ընդունված «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 8 հոդվածին եւ 28 հոդվածի երկրորդ մասին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով**

43. Նախքան 2005 թվականի նոյեմբերի 27-ին կատարված փոփոխությունները Սահմանադրության 28-րդ հոդվածը մեկնաբանելիս Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված հիմքերով անձի գույքը կարող է օտարվել, եւ անձը կարող է, առանց իր համաձայնության, զրկվել իր գույքից միայն անշարժ գույքի վերաբերյալ համապատասխան օրենքն ընդունվելու դեպքում, որը կհիմնավորեր օտարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը, եւ որում կնշվեին հասարակության եւ պետության այն կարիքները, որոնք կբավարարվեն օտարման դեպքում: Օրենքով Կառավարությունը նաեւ պարտավորվում է ֆինանսատնտեսական գնահատման հիման վրա սահմանել փոխհատուցման չափը՝ հաշվի առնելով շուկայական գները, Կառավարության եւ օտարման ենթակա գույքի սեփականատիրոջ միջեւ բանակցության արդյունքները, եւ նրա գրավոր համաձայնությամբ: Սահմանադրական դատարանն այնուհետեւ նշել է, որ Կառավարությունը չունի հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման ընթացակարգ սահմանելու լիազորություն, ինչը նրան իրավունք կտար օտարելու տվյալ անշարժ գույքը:

**Գ. ՀՀ կառավարության 2001 թ. հոկտեմբերի 5-ի թիվ 950 որոշումը՝ Երեւան քաղաքի օտարման գոտիներում գտնվող հողամասերն ու անշարժ գույքը վերցնելու, փոխհատուցելու, գնային առաջարկը ձեւավորելու եւ իրացնելու կարգը հաստատելու մասին**

44. 7-րդ կետով նախատեսվում է, որ օտարման գոտում գտնվող անշարժ գույքի (հողամասերի, շենքերի եւ շինությունների) դիմաց փոխհատուցման չափը որոշելու համար հիմք է հանդիսանում անշարժ գույքի շուկայական արժեքը, որը որոշվում է մրցույթով ընտրված՝ գնահատման լիցենզավորված կազմակերպության կողմից:

**Դ. ՀՀ կառավարության 2002 թ. օգոստոսի 1-ի թիվ 1151-Ն որոշումը՝ Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին**

45. Երեւանում կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով Կառավարությունը որոշել է հաստատել Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար վերցվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր եւ շինություններ) օտարման գոտին՝ 345 000 քմ ընդհանուր մակերեսով:

**Ե. ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թ. ապրիլի 18-ի որոշումը՝ «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության 31 հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով**

46. Սահմանադրական դատարանը Հայաստանի օմբուդսմենի դիմումի հիման վրա գտել է, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ին փոփոխված Սահմանադրության 31-րդ հոդվածով պահանջվում է, որ օտարման գործընթացը

կարգավորվի օրենքով: Այդ օրենքում հստակ ձեակերպմամբ պետք է սահմանվի հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման իրավական շրջանակը: Վիճարկվող իրավական դրույթները, այդ թվում՝ Կառավարության թիվ 1151-Ն որոշումը, չեն բավարարել այս պահանջը եւ, այդպիսով, անհամատեղելի են եղել, *inter alia*, Սահմանադրության 31-րդ հոդվածի հետ:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

47. Դիմումատուները բողոքել են, որ իրենք անօրինական կերպով զրկվել են իրենց գույքից, եւ դա որեւէ հանրային շահ չի հետապնդել, իսկ շնորհված փոխհատուցումը եղել է անհամաչափ: Ավելին, նրանց զրկել են ֆինանսական խրախուսումից, քանի որ Վերաքննիչ դատարանի վճիռն ընդունվել է նրանց կողմից Գրասենյակի 2006 թվականի հուլիսի 6-ի առաջարկն ստանալուց հետո տասն օրից պակաս ժամկետում: Նրանք հիմնվել են Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա, համաձայն որի՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

**Ա. Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը**

48. Կառավարությունը միակողմանի հայտարարություն է ներկայացրել՝ պահանջելով Դատարանից Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գանգատը հանել գործերի ցուցակից:

Ելնելով իր իրավագրությամբ սահմանված չափորոշիչներից՝ Դատարանը գտնում է, որ Կառավարության ներկայացրած միակողմանի հայտարարությունը բավարար հիմքեր չի պարունակում համարելու, որ Կոնվենցիայով սահմանված՝ մարդու իրավունքների հարգումը չի պահանջում, որ Դատարանը շարունակի գործի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ վերջում): Ուստի Դատարանը մերժում է գանգատը գործերի ցուցակից հանելու մասին Կառավարության պահանջը եւ հետեւապես անցնում է գործի ըստ էության քննությանը (տե՛ս Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի (նախնական առարկություններ) [ՄՊ] [Tahsin Acar v. Turkey (preliminary objections) [GC]], թիվ 26307/95, § 75, ՄԻԵԴ 2003--VI):

**Բ. Ընդունելիությունը**

49. Դատարանը նշում է, որ այս բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

**Գ. Ըստ էության քննությունը**

50. Դիմումատուները հայտնել են, որ իրենց գույքից զրկելը չի կատարվել օրենքով նախատեսված պայմանների համաձայն, քանի որ այդ ամենն իրականացվել է Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված երաշխիքների

խախտմամբ: Նրանք պնդել են նաև, որ իրենց գույքի օտարումը հիմնված չի եղել որեւէ գերակա հանրային շահի վրա: Այնուհետև դիմումատուները հայտնել են, որ ներպետական վարույթների ժամանակ իրենց գույքի շուկայական արժեքը կոպիտ կերպով թերագնահատվել է: Վերջապես նրանք պնդել են, որ իրենց օտարված գույքի համար իրենց փոխհատուցում չի վճարվել: Առաջին դիմումատուն ոչ իր գույքը վերցնելու վերաբերյալ համաձայնագիր է ստորագրել, ոչ էլ երբեւէ փորձել է պահանջել 54 838 000 ՀՀ դրամ գումարը, որը Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 6-ի վճռից հետո ենթադրաբար փոխանցվել է նոտարի դեպոզիտ հաշվին:

51. Կառավարությունը զերծ է մնացել այս բողոքի առնչությամբ որեւէ հայտարարություն անելուց:

52. Դատարանը նշում է, որ նախկինում քննել է ներպետական օրենսդրության նույն դրույթների կիրառմանն առնչվող բողոքներ Հայաստանի դեմ բերված բազմաթիվ գործերում եւ եկել է այն եզրահանգման, որ գույքից զրկելը չի կատարվել տվյալ ժամանակահատվածում գործող «օրենքով նախատեսված պայմանների» համաձայն (տե՛ս, ի թիվս այլ գործերի, *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [Minasyan and Semerjyan v. Armenia], թիվ 27651/05, §§ 69-77, 2009 թվականի հունիսի 23. *Թունյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [Tunyan and Others v. Armenia], թիվ 22812/05, §§ 35-39, 2012 թվականի հոկտեմբերի 9): Դատարանը սույն գործի պարագայում այդ եզրահանգումից շեղում կատարելու որեւէ պատճառ չի տեսնում:

53. Նկատի առնելով սույն եզրահանգումը՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում քննել, թե արդյոք համապատասխան միջամտությունն իրավաչափ նպատակ է հետապնդել եւ այդ նպատակին համաչափ է եղել (տե՛ս, *օրինակ, Վիատովիչն ընդդեմ Խորվաթիայի* [Vijatović v. Croatia], թիվ 50200/13, § 58, 2016 թվականի փետրվարի 16. *Գուբիեւն ընդդեմ Ռուսաստանի* [Gubiyev v. Russia], թիվ 29309/03, § 83, 2011 թվականի հուլիսի 19):

54. Հետեաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՅՈՒՍ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

55. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա՝ դիմումատուները բողոք են ներկայացրել Վճռաբեկ դատարանի մատչելիությունը չապահովվելու եւ Վճռաբեկ դատարանի կազմի օրինականության վերաբերյալ, երբ այն որոշել է վերադարձնել նրանց 2006 թվականի հուլիսի 28-ի բողոքները: Կրկին հիմնվելով նույն դրույթի վրա՝ առաջին դիմումատուն բողոքել է, որ կողմերի հավասարության սկզբունքը չի հարգվել, իսկ երկրորդ դիմումատուն մի շարք այլ բողոքներ է առաջ քաշել արդար լսումների բացակայության վերաբերյալ:

56. Հաշվի առնելով գործի փաստերն ու դիմումատուներին գույքից զրկելու առնչությամբ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում հայտնաբերելը՝ Դատարանը համարում է, որ այն քննել է սույն գանգատում բարձրացված հիմնական իրավական հարցը: Հետեաբար այն եզրակացնում է, որ դիմումատուների՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ բողոքների մասով առանձին որոշում կայացնելու անհրաժեշտություն չկա (տե՛ս *Ղասաբյանը եւ այլք ընդդեմ Հայաստանի* [Ghasabyan and Others v. Armenia], թիվ 23566/05, § 29, 2014 թվականի նոյեմբերի 13):

## III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

57. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:



## Ա. Վնասը

### 1. Նյութական վնասը

58. Դիմումատուները պահանջել են 480 000 000 ՀՀ դրամ (879 000 եվրո)՝ որպես նյութական վնասի հատուցում: Այս գումարը ներառել է դիմումատուների՝ իրենց օտարված գույքի դիմաց 280 000 000 ՀՀ դրամ (512 000 եվրո) փոխհատուցման պահանջը եւ 200 000 000 ՀՀ դրամ (366 000 եվրո)՝ եկամտի կորստի դիմաց փոխհատուցման պահանջը:

Որպես իրենց պահանջի առաջին մասի հիմնավորում՝ դիմումատուները ներկայացրել են 2015 թվականի դեկտեմբերի 23-ի եւ 2016 թվականի մայիսի 6-ի ամսաթվերով գնահատման երկու հաշվետվություն՝ իրենց հողամասի շուկայական արժեքը գնահատելով համապատասխանաբար 279 100 000 ՀՀ դրամ (532 830 եվրո) եւ 280 450 ՀՀ դրամ (513 310 եվրո) համապատասխան ամսաթվերի դրությամբ, երբ կազմվել են տվյալ հաշվետվությունները: Երկու հաշվետվություններում էլ դիմումատուների հողամասի շուկայական արժեքն օտարման պահի դրությամբ (2005 թվականի սեպտեմբերի 1-ին) գնահատվել է 196 300 000 ՀՀ դրամ (345 270 եվրո տվյալ պահի դրությամբ):

Ինչ վերաբերում է իրենց պահանջի երկրորդ մասին, դիմումատուները 2002 թվականի հոկտեմբերի 3-ի ամսաթվով վարձակալության պայմանագիր են ներկայացրել, որով առաջին դիմումատուն համապատասխան գույքը 1 600 000 ՀՀ դրամ (2 785 եվրո տվյալ պահի դրությամբ) ամսական վարձավճարի դիմաց վարձակալությամբ տվել է մասնավոր ընկերության: Դիմումատուները պնդել են, որ պայմանագիրը կնքվել էր անորոշ ժամկետով: Այնուամենայնիվ, 2006 թվականի հունվարի 16-ի համաձայնագրով նրանք ստիպված են եղել դադարեցնել պայմանագիրը, քանի որ հարկադիր կատարողները նրանցից պահանջել են հանձնել գույքը:

Դիմումատուներն այնուհետեւ պահանջել են 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

59. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների պահանջները չափազանցված են եւ ճշգրիտ ու հավաստի փաստաթղթերով հիմնավորված չեն:

Ինչ վերաբերում է, մասնավորապես, դիմումատուների՝ իրենց գույքի արժեքի փոխհատուցման վերաբերյալ պահանջին, Կառավարությունը պնդել է, որ այս առնչությամբ փոխհատուցման գնահատումը պետք է հիմնված լինի տվյալ ժամանակահատվածում համապատասխան գույքի շուկայական արժեքի վրա:

Կառավարությունը հայտնել է, որ դիմումատուները ներպետական վարույթների ընթացքում շնորհված 60 292 000 ՀՀ դրամի (մոտավորապես 114 650 եվրո տվյալ ժամանակահատվածում) չափով փոխհատուցումը չեն ստացել իրենց իսկ բացթողման պատճառով: Հետեւաբար, այս գումարի առումով Կառավարությունը պատասխանատվություն չի կրում գնաճի հնարավոր բացասական հետեանքների համար: 2006 թվականի նոյեմբերի 28-ին Գրասենյակը համապատասխան գումարը փոխանցել է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան բանկային դեպոզիտ հաշվին: Կառավարությունը ներկայացրել է համապատասխան փաստաթղթային ապացույցներ, որոնք փաստում են, որ տվյալ գումարը հասանելի է եղել համապատասխան բանկային հաշվին 2016 թվականի մայիս ամսվա դրությամբ, երբ Կառավարությունը ներկայացրել է այս առնչությամբ իր փաստարկները:

Կառավարությունը կասկած է հայտնել դիմումատուների ներկայացրած անշարժ գույքի գնահատման հաշվետվություններում արտացոլված՝ դիմումատուների գույքի շուկայական արժեքի գնահատման ճշգրտության առնչությամբ: Նրանք պնդել են, *inter alia*, որ համապատասխան հաշվետվություններում նշված՝ գույքի շուկայական գինը տվյալ ժամանակահատվածում, այն է՝ 196 300 000 ՀՀ դրամ, չի համապատասխանում Անշարժ գույքի պետական կադաստրի 2006 թվականի փետրվարի 7-ի այն նույն

գրության մեջ նշված անշարժ գույքի գներին, որի վրա դիմումատուները հիմնվել են ներպետական վարույթների ժամանակ՝ ապացուցելու համար, որ իրենց գույքի արժեքը թերագնահատվել է:

Ինչ վերաբերում է եկամտի կորստի առնչությամբ դիմումատուների պահանջին, Կառավարությունը վիճարկել է որպես այս պահանջի հիմնավորում դիմումատուների ներկայացրած 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վարձակալության պայմանագրի վավերությունը: Նրանք մասնավորապես պնդել են, որ համապատասխան պայմանագիրը գրանցված չի եղել Անշարժ գույքի պետական կադաստրում, ինչպես պահանջվում է ներպետական օրենսդրությամբ: Ավելին, հարկային մարմինների կողմից տրամադրված տեղեկության համաձայն՝ ոչ առաջին դիմումատուն եւ ոչ էլ ընկերությունը, որը ենթադրաբար վարձակալել է գույքը, 2002 թվականից մինչեւ 2006 թվականն ընկած ժամանակահատվածում վարձակալության հետ կապված որեւէ հարկային վճարում չեն կատարել:

Վերջապես, Կառավարությունը պնդել է, որ դիմումատուների՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման մասով պահանջը չի համապատասխանում Հայաստանի դեմ համանման գործերով Դատարանի կողմից սահմանված նախկին փոխհատուցումներին: Հղում անելով Մինասյանի եւ Սեմերջյանի (*Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [Minasyan and Semerjyan v. Armenia (just satisfaction)], թիվ 27651/05, § 24, 2011 թվականի հունիսի 7) եւ Բաղդասարյանի եւ Ջարիկյանցի (*Բաղդասարյանը եւ Ջարիկյանցն ընդդեմ Հայաստանի* [Baghdasaryan and Zarikyants v. Armenia], թիվ 43242/05, § 30, 2014 թվականի նոյեմբերի 13) գործերով Դատարանի կողմից սահմանված փոխհատուցումներին՝ այս մասով դիմումատուների պահանջը Կառավարությունը համարում է չափազանցված:

60. Դատարանը մի շարք դեպքերում որոշել է, որ վճիռը, որով այն արձանագրում է խախտում, պատասխանող պետության վրա իրավական պարտավորություն է դնում՝ խախտմանը վերջ տալու եւ դրա հետեւանքների

համար այնպիսի հատուցում տրամադրելու, որ հնարավորինս վերականգնվի խախտումից առաջ եղած վիճակը (տե՛ս Իատրիդիսն ընդդեմ Հունաստանի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Iatridis v. Greece (just satisfaction) [GC]], թիվ 31107/96, § 32, ՄԻԵԴ 2000-XI): Եթե խախտման բնույթը թույլ է տալիս *restitutio in integrum* (վերականգնել մինչեւ իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը), ապա պատասխանատվությունը կրող պետությունը պետք է դա ինքն իրականացնի, քանի որ Դատարանը դա անելու ոչ լիազորություն ունի եւ ոչ էլ գործնական հնարավորություն: Եթե, այնուամենայնիվ, ներպետական իրավունքով խախտման հետեանքների համար հատուցում չի նախատեսվում, կամ նախատեսվում է մասնակի հատուցում, ապա 41-րդ հոդվածով Դատարանը լիազորություն է ստանում տուժած կողմին տրամադրելու այնպիսի փոխհատուցում, որն այն նպատակահարմար է գտնում (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, Բրումարեսկուն ընդդեմ Ռումինիայի (արդարացի փոխհատուցում) [ՄՊ] [Brumărescu v. Romania (just satisfaction) [GC]], թիվ 28342/95, § 20, ՄԻԵԴ 2001-I):

61. Դատարանը նշում է, որ դիմումատուների տան առնչությամբ *restitutio in integrum* հնարավոր չէ, քանի որ այն քանդվել է: Միեւնույն ժամանակ Դատարանը նշում է, որ նյութական վնասի համար դիմումատուների պահանջը վերաբերում է միայն հողի արժեքին, որը մինչեւ անգամ գնահատվել է երկու փորձագիտական հաշվետվությունների մեջ, որոնք նրանք ներկայացրել են որպես իրենց պահանջի հիմնավորում:

Քանի որ դիմումատուները փոխհատուցում են պահանջում հողամասի արժեքի համար, որից իրենք զրկվել են, Դատարանը նշում է, որ հողը վերադարձնելու դեպքում դիմումատուները, ըստ էության, կհայտնվեն այնպիսի վիճակում, որը հնարավորինս համարժեք կլինի այն վիճակին, որում նրանք կլինեին, եթե չխախտվեր Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը: Տվյալ գործում, սակայն, հաշվի առնելով այն, որ դիմումատուները երբեք հողի նկատմամբ իրավունքի վերականգնում չեն պահանջել ազգային դատարաններում, եւ

վերականգնման այդպիսի հնարավորություն Դատարան ներկայացրած իրենց փաստարկներում կողմերը չեն քննարկել, Դատարանը համարում է, որ նյութական վնասի փոխհատուցում շնորհելը սույն գործով առավել նպատակահարմար է (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Չենգելյանը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* (արդարացի փոխհատուցում) [Chengelyan and Others v. Bulgaria (just satisfaction)], թիվ 47405/07, § 28, 2017 թվականի նոյեմբերի 23):

62. Դիմումատուների կրած նյութական վնասը գնահատելիս Դատարանը նկատի է առնում Կառավարության փաստարկն առ այն, որ ներպետական վարույթների ժամանակ դիմումատուներին շնորհված 60 292 000 ՀՀ դրամ գումարը 2006 թվականի նոյեմբերի 28-ից ի վեր շարունակում է դեպոնացված մնալ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության համապատասխան բանկային հաշվին (տե՛ս վերելում՝ 59-րդ պարբերությունը): Հետեւաբար, այս գումարը պետք է նվազեցվի վերջնական շնորհվող գումարից, քանի որ ենթադրվում է, որ այն դեռեւս հասանելի է դիմումատուների համար:

63. Հաշվի առնելով Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի (տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* (արդարացի փոխհատուցում) [*Minasyan and Semerjyan v. Armenia* (just satisfaction)], թիվ 27651/05, §§ 17-21, 2011 թվականի հունիսի 7) գործով կայացված վճռով սահմանված սկզբունքները՝ Դատարանը մերժում է դիմումատուների պահանջները, քանի որ դրանք հիմնված են 2015 թվականի դեկտեմբերի եւ 2016 թվականի մայիսի դրությամբ նրանց հողամասի շուկայական արժեքի վրա, եւ համարում է, որ փոխհատուցման չափը պետք է որոշվի՝ հաշվի առնելով այն ամսաթիվը, երբ դիմումատուները կորցրել են իրենց գույքի՝ տան եւ հարակից հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը, այն է՝ 2006 թվականի դեկտեմբերը (տե՛ս վերելում՝ 40-րդ պարբերությունը):

64. Դատարանը, սակայն, նշում է, որ իր տրամադրության տակ չունի գնահատման հաշվետվություն, որով կորոշվեր համապատասխան գույքի շուկայական արժեքը 2006 թվականի դեկտեմբերի դրությամբ:

Դիմումատուների կողմից ներկայացված 2015 թվականի դեկտեմբերի եւ 2016 թվականի մայիսի հաշվետվությունների համաձայն՝ 2005 թվականի սեպտեմբերի դրությամբ նրանց հողի արժեքը կազմում էր 345 270 եվրոյին համարժեք գումար: Դատարանը նկատում է, որ 2001 թվականի հոկտեմբերի 23-ի պայմանագրի համաձայն՝ դիմումատուները համապատասխան գույքը գնել են տվյալ ժամանակահատվածում մոտավորապես 167 250 եվրոյին համարժեք գումարով (տե՛ս վերելում՝ 5-րդ պարբերությունը): Դատարանն այնուհետեւ նկատում է, որ ներպետական վարույթների ժամանակ դիմումատուները ապացույցներ են ներկայացրել հիմնավորելու համար, որ 2001 թվականից մինչեւ 2005 թվականն ընկած ժամանակահատվածում գույքի գներն ավելի քան կրկնապատկվել են (տե՛ս վերելում՝ 19-րդ եւ 20-րդ պարբերությունները):

Դատարանը, այդուհանդերձ, նշում է, որ Դատարանում վարույթների ընթացքում դիմումատուները որեւէ ապացույց չեն ներկայացրել՝ հիմնավորելու, որ գնման պահին գույքի համար վճարված գինը համընկել է տվյալ ժամանակահատվածում դրա միջին շուկայական գնի հետ: Նկատի ունենալով վերոնշյալը եւ տվյալ ժամանակահատվածում Հայաստանի անշարժ գույքի շուկայում գնման գների վերաբերյալ իր ունեցած տեղեկությունները՝ Դատարանը չի կարող դիմումատուների ներկայացրած գնահատումները համարել լրիվ հավաստի եւ նյութական փոխհատուցման չափը կորոշի իր տրամադրության տակ եղած նյութերի հիման վրա:

65. Այսպիսով, իր ունեցած բոլոր տեղեկությունների հիման վրա կատարելով սեփական գնահատումը՝ Դատարանը համապատասխան գույքի շուկայական արժեքը տվյալ ժամանակահատվածում գնահատում է մոտավորապես 234 000 եվրոյին համարժեք: Հաշվի առնելով *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի* [Minasyan and Semerjyan v. Armenia]

(տե՛ս վերելում հիշատակված՝ *Մինասյանի եւ Սեմերջյանի* գործը, § 20) գործով կայացված վճռով սահմանված սկզբունքները՝ այս գումարը պետք է փոխարկվի գործող արժեքով՝ հակակշռելու գնաճի ունեցած ազդեցությունը: Ավելին, այն պետք է կրճատվի ներպետական փոխհատուցման գումարի (տե՛ս վերելում՝ 62-րդ պարբերությունը) չափով:

66. Հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ կրած նյութական վնասը Դատարանը գնահատում է 250 000 եվրո եւ որոշում է այս գումարը շնորհել դիմումատուներին միասին:

67. Վերջապես Դատարանը նշում է, որ դիմումատուները պահանջել են եկամտի այն կորստի փոխհատուցում, որն իրենք ենթադրաբար կրել են այն պատճառով, որ համապատասխան գույքի օտարումից հետո այլեւս չեն կարողացել ստանալ դրա վարձավճարը: Դատարանը նկատում է, որ որպես իրենց պահանջի հիմնավորում դիմումատուների ներկայացրած 2002 թվականի հոկտեմբերի 15-ի վարձակալության պայմանագրի համաձայն՝ այն երեսուն օրվա ընթացքում ենթակա էր պարտադիր գրանցման Անշարժ գույքի կադաստրում: Պայմանագրով նախատեսվում էր նաեւ, որ այն ուժի մեջ էր մտնելու վարձակալության պայմանագրից ծագող գույքային իրավունքների գրանցման պահից: Դատարանի տրամադրության տակ եղած նյութերից պարզ է դառնում, որ համապատասխան պայմանագիրը պետական գրանցման համար իրավասու մարմին չի ներկայացվել, ինչպես պահանջվում էր ներպետական օրենսդրությամբ եւ հենց պայմանագրի համապատասխան դրույթներով: Այս հանգամանքներում Դատարանը համարում է, որ այս մասով դիմումատուների պահանջը պատշաճ կերպով հիմնավորված չէ եւ կորստի մասով առանձին փոխհատուցման համար հիմք չէ:

## 2. *Ոչ նյութական վնասը*

68. Դիմումատուները պահանջել են 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

69. Կառավարությունը համարել է, որ դիմումատուների պահանջն այս մասով չափազանցված է:

70. Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով, Դատարանը որոշում է այս մասով դիմումատուներից յուրաքանչյուրին շնորհել 3 000 եվրո:

#### **Բ. Ծախսերը եւ ծախքերը**

71. Դիմումատուները նաեւ պահանջել են 807 600 ՀՀ դրամ (1 480 եվրո)՝ ներպետական դատարաններում եւ 3 336 594 ՀՀ դրամ (6 170 եվրո)՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

72. Կառավարությունն այս առնչությամբ որեւէ փաստարկ չի ներկայացրել:

73. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափորոշիչները, Դատարանը ողջամիտ է համարում շնորհել 3 000 եվրո՝ ներպետական վարույթների ընթացքում եւ Դատարանում վարույթի ընթացքում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

74. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:



## ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. Միաձայն *մերժում է* գանգատը գործերի ցուցակից հանելու Կառավարության պահանջը.

2. Միաձայն *հայտարարում է* գանգատն ընդունելի.

3. Միաձայն *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.

4. Ձայների՝ վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ *վճռում է*, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ դիմումատուների ներկայացրած բողոքներն առանձին քննելու անհրաժեշտություն չկա.

5. *Վճռում է, որ՝*

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուներին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) միաձայն, նյութական վնասի դիմաց՝ 250 000 եվրո (երկու հարյուր հիսուն հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ձայների՝ վեց կողմ եւ մեկ դեմ հարաբերակցությամբ, ոչ նյութական վնասի դիմաց՝ 6 000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

iii) միաձայն, ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 3 000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած դիմումատուներից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի

սահմանաձև լրմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարաձև երեք տոկոսային կետ.

6. Միաձայն մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հոկտեմբերի 17-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Քսենյա Տուրկովիչ

Քարտուղար

Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Պաստոր Վիլանովայի առանձին կարծիքը:

Ք.Տ.Ու.

Ա.Կ.

ԴԱՏԱՎՈՐ ՊԱՍՏՈՐ ՎԻԼԱՆՈՎԱՅԻ  
ՄԱՍԱՄԲ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

(Թարգմանություն)

Իմ չհամընկնող կարծիքը վերաբերում է միայն վճռի եզրափակիչ մասի 4-րդ կետին եւ 5-րդ կետի «ա) (ii)» ենթակետին, ինչի առնչությամբ ես տալիս եմ Դատարանի մեծամասնության դիրքորոշմանը չհամընկնող իմ միակ ձայնը:

*Պոպովը եւ այլք ընդդեմ Ռուսաստանի* [Popov and Others v. Russia] (թիվ 44560/11, 2018 թվականի նոյեմբերի 27) գործով իմ չհամընկնող կարծիքի մեջ ես արդեն քննադատել եմ «հիմնական իրավական հարցի» (տե՛ս վճռի 56-րդ պարբերությունը) վրա կենտրոնանալու փաստը, ինչին հիմա անդրադառնում եմ: Դատարանի մյուս դատավորները նույնպես նախկինում ելույթ են ունեցել ընդդեմ այս դատական մոտեցմանը, որը ես համարում եմ սխալական (տե՛ս, *inter alia*, *Պետրուխովն ընդդեմ Ուկրաինայի* (թիվ 2) [Petukhov v. Ukraine (no. 2)] (թիվ 41216/13, 2019 թվականի մարտի 12) գործով դատավորներ Բոսնյակի եւ Կյուրիսի, *Կուզմենկոն ընդդեմ Ուկրաինայի* [Kuzmenko v. Ukraine] (թիվ 49526/07, 2017 թվականի մարտի 9) գործով դատավորներ Նուսբերգերի եւ Ռանզոնիի, *Մարիուս Լեանդովսկին ընդդեմ Լեհաստանի* [Mariusz Lewandowski v. Poland] (թիվ 66484/09, 2012 թվականի հուլիսի 3) գործով դատավոր Դե Գաետանոյի, *Քիշմիրն ընդդեմ Թուրքիայի* [Kişmir v. Turkey] (թիվ 27306/95, 2005 թվականի մայիսի 31) գործով դատավոր Մուլարոնիի, *Ստանեւն ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ] [Stanev v. Bulgaria [GC]] (թիվ 36760/06, ՄԻԵԴ 2012) գործով դատավորներ Տուկենսի, Շաիլմանի եւ Լաֆֆրանկի, *Դրաոնն ընդդեմ Ֆրանսիայի* [ՄՊ] [Draon v. France [GC]] (թիվ 1513/03, 2005 թվականի հոկտեմբերի 6) գործով դատավորներ Ռոզակիսի, Բրաուցայի, Բոնելլոյի, Լուկադեսի եւ Ժոսիենի՝ Դատարանի մեծամասնության դիրքորոշմանը չհամընկնող կարծիքները):

Սույն վճռով քննվում է միայն դիմումատուների՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի առնչությամբ բողոքը, եւ նրանց՝ 6-րդ հոդվածի առնչությամբ բողոքին անդրադարձ չի կատարվում: Սա մտահոգիչ է հատկապես այն պատճառով, որ դիմումատուները բողոքել են առանձնապես լուրջ խախտումների առնչությամբ, ներառյալ՝ Վճռաբեկ դատարանի մատչելիությունից զրկվելը, այդ դատարանի կազմի անօրինականությունը եւ, վերջապես, կողմերի հավասարության սկզբունքի խախտումը (տե՛ս վճռի 55-րդ պարբերությունը): Այս դժգոհություններն անտեսելու փաստը հատկապես խնդրահարույց է, քանի որ 2009 թվականին Դատարանը կողմերին կոնկրետ այս կետերի հետ կապված ավելի քան չորս հարց է ուղղել: Տասը տարի անց մեծամասնությունն այս նույն հարցերը համարում է երկրորդական եւ քննության ոչ արժանի: Իմ համեստ կարծիքով՝ չի կարելի սուբյեկտիվ կերպով առանձնացնել Կոնվենցիայով ճանաչված իրավունքներն ու ազատությունները: Վեճի կողմերն արժանի են, որ իրենց կողմից բարձրացված բոլոր բողոքներն օբյեկտիվ կերպով (պետք է ընդունել, խորությամբ կամ ոչ այնքան) քննվեն: Ըստ էության դատարանը լեզիտիմ է, եթե այն վստահություն է վայելում հանրության շրջանում: Ամփոփելով՝ գտնում եմ, որ ժամանակն է, որ Մեծ պալատն այս սահմանափակող մոտեցման հետ կապված վճռական դիրքորոշում ունենա: